ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/176

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Մասնակից՝ «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-111/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, գործիքների, գործիքային հատուկ հարմարանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 28.06.2021թ.-ի թիվ 26/26-1/10539-2021 գրությամբ «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 23.06.2021թ.-ի թիվ Ե/40/1609-21 գրության հիման վրա, 28.06.2021թ.-ին «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 28.06.2021թ.-ին:

29.06.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/176 համարի ծածկագիրը:

08.07.2021թ.-ին և 23.07.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 08.07.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 23.07.2021թ.-ին:

2. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն 23.06.2021թ.-ի թիվ Ե/40/1609-21 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար գործիքների, գործիքային հատուկ հարմարանքների ձեռքբերման նպատակով «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-111/21» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «ԳԼԱՎՍՆԱԲ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է մասնակցության հայտ:

Հայտերի բացման և գնահատման նիստում արձանագրվել է, որ «ԳԼԱՎՍՆԱԲ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ հրավերի Հավելված 1.1-ում (առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր) թիվ 1 չափաբաժնում առաջարկվող ապրանքի (հորատման թագագլխիկ) տեխնիկական բնութագրում նշված է «կամ համարժեքը», ինչպես նաև նշված է, որ ներկայացված ապրանքը սերտիֆիկացման ենթակա չէ:

Հրավերի 6-րդ Հավելվածի լրացուցիչ պայմաններ մասում հստակ գրված է «1-ից 7-րդ չափաբաժինների համար անհրաժեշտ է ներկայացնել որակի հավաստագիր (սերտիֆիկատ) կամ անձնագիր»:

Համաձայն ՀՀ Կառավարության 526-Ն Որոշման 41-րդ կետի՝ գնահատող հանձնաժողովի նիստը կասեցվել է, համակարգող քարտուղարը էլեկտրոնային փոստի և Արմեփս գնումների համակարգի միջոցով ծանուցել է մասնակցին առկա անհամապատասխանության վերաբերյալ՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել այն, ինչպես նաև ներկայացնել հիմնավորում ապրանքի սերտիֆիկացման ենթակա չլինելու մասին: Սահմանված ժամկետում մասնակցի կողմից անհամապատասխանությունը շտկվել է մասնակի՝ թիվ 1 չափաբաժնում առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրից հանվել է «կամ համարժեքը», սակայն չի ներկայացվել հիմնավորում սերտիֆիկացման ենթակա չլինելու մասին: Մինչև հայտերի շտկման համար նախատեսված վերջնաժամկետը (17.06.2021թ ժամը 24:00) մասնակիցը հրավերի պահանջներին համապատասխան սերտիֆիկացման հետ կապված որևէ հիմնավորում չի ներկայացրել այլ 18.06.2021թ. ժամը 12:52 րոպե համակարգող քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկել է գրություն, որը ըստ հանձնաժողովի հիմնավորում չի պարունակել:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի գ. պարբերության և ՀՀ Կառավարության 526-Ն Որոշման 45-րդ կետի պահանջներով, Ձեզ ենք ներկայացնում համապատասխան փաստաթղթերի պատճենները:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-111/21» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 29.06.2021թ.-ի գրությամբ դիմել է «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 28.06.2021թ.-

ի թիվ 26/26-1/10539-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին՝ չներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում:

4. <u>ՍՑ-LO-2021/176 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից գործիքների, գործիքային հատուկ հարմարանքների ձեռքբերման նպատակով 01.06.2021թ.-ին հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-111/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցի համաձայն՝ որպես լրացուցիչ պայմաններ սահմանվել է, որ 1-ից 7-րդ չափաբաժինների համար անհրաժեշտ է ներկայացնել որակի հավաստագիր կամ անձնագիր:

iii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով 1-ին չափաբաժնի մասով հայտ է ներկայացրել «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ն:

iv. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-111/21» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

v. Մասնակիցը թիվ 1.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, 1-ին չափաբաժնի մասով ներկայացրել է հետևյալ տեխնիկական բնութագիրը. «Ալմաստե թագագլխիկներով, տիպը CIB- 52-1 կամ համարժեքը, 1¼“ ℓ=450, փ-125: Սերտիֆիկացման ենթակա չէ (отказное письмо):»:

vi. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 09.06.2021թ.-ից 21.06.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 8-րդ կետի համաձայն՝ «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ հրավերի Հավելված 1.1-ում (առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր) թիվ 1 չափաբաժնում առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում նշված է «կամ համարժեքը», ուստի անհրաժեշտ է հստակեցնել ապրանքի տեխիկական բնութագիրը: Հրավերով նաև նշված բաժնի համար սահմանվել է որակի հավաստագիր կամ անձնագիր ներկայացնելու պայման, սակայն Մասնակիցը նշել է, որ ապրանքը սերտիֆիկացման ենթակա չէ, ուստի անհրաժեշտ է ներկայացնել հիմնավորում սերտիֆիկացման ենթակա չլինելու մասին:

vii. Նույն կետի համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով, որոշել է մեկ /1/ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխա-նությունները:

viii. Հանձնաժողովի քարտուղարի կողմից 16.06.2021թ.-ին էլ. փոստի միջոցով անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ նույնաբովանդակ ծանուցում է ուղարկվել Մասնակցի GlavSnabimport@gmail.com էլ. փոստի հասցեին և առաջարկվել է մինչև ս.թ. հունիսի 17-ի ժամը 24:00-ը շտկել անհամապատասխանությունը:

ix. Նույն արձանագրության համաձայն՝ «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում 1-ին չափաբաժնով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը հստակեցվել է, սակայն մինչև հայտերի շտկման համար նախատեսված վերջնաժամկետը Մասնակիցը չի ներկայացվել որևէ հիմնավորում սերտիֆիկացման ենթակա չլինելու մասին, ինչով պայմանավորված «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ի հայտը 1-ին չափաբաժնի մասով գնահատվել է անբավարար և մերժվել է:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների

նախարարության կողմից 28.06.2021թ.-ի թիվ 26/26-1/10539-2021 գրությամբ «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն Ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է գործիքների, գործիքային հատուկ հարմարանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում

են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից գործիքների, գործիքային հատուկ հարմարանքների ձեռքբերման նպատակով 01.06.2021թ.-ին հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-111/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից գործիքների, գործիքային հատուկ հարմարանքների ձեռքբերման նպատակով 01.06.2021թ.-ին հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-111/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցի համաձայն՝ որպես լրացուցիչ պայմաններ սահմանվել է, որ 1-ից 7-րդ չափաբաժինների համար անհրաժեշտ է ներկայացնել որակի հավաստագիր կամ

անձնագիր: Ընթացակարգին մասնակցելու նպատակով 1-ին չափաբաժնի մասով հայտ ներկայացրած «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, 1-ին չափաբաժնի մասով ներկայացրել է հետևյալ տեխնիկական բնութագիրը. «Ալմաստե թագագլխիկներով, տիպը CIB- 52-1 կամ համարժեքը, 1¼“ ℓ=450, ф-125: Սերտիֆիկացման ենթակա չէ (отказное письмо):»: Հանձնաժողովի 09.06.2021թ.-ից 21.06.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 8-րդ կետով արձանագրվել է, որ «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ հրավերի Հավելված 1.1-ում 1-ին չափաբաժնում առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում նշված է «կամ համարժեքը», ուստի անհրաժեշտ է հստակեցնել ապրանքի տեխիկական բնութագիրը: Հրավերով նաև նշված բաժնի համար սահմանվել է որակի հավաստագիր կամ անձնագիր ներկայացնելու պայման, սակայն Մասնակիցը նշել է, որ ապրանքը սերտիֆիկացման ենթակա չէ, ուստի անհրաժեշտ է ներկայացնել հիմնավորում սերտիֆիկացման ենթակա չլինելու մասին, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է մեկ /1/ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչի մասին Հանձնաժողովի քարտուղարի կողմից 16.06.2021թ.-ին էլ. փոստի միջոցով անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ նույնաբովանդակ ծանուցում է ուղարկվել Մասնակցի GlavSnabimport@gmail.com էլ. փոստի հասցեին և առաջարկվել է մինչև ս.թ. հունիսի 17-ի ժամը 24:00-ը շտկել անհամապատասխանությունը: «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում 1-ին չափաբաժնով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը հստակեցվել է, սակայն մինչև հայտերի շտկման համար նախատեսված վերջնաժամկետը Մասնակիցը չի ներկայացվել որևէ հիմնավորում սերտիֆիկացման ենթակա չլինելու մասին, ինչով պայմանավորված «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ի հայտը 1-ին չափաբաժնի մասով գնահատվել է անբավարար և մերժվել է:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների

խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-111/21» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպիսի պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ն Պատվիրատուի կողմից սահմանված ժամանակահատվածում, չշտկելով արձանագրված անհամապատասխանությունները, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 28.06.2021թ.-ի թիվ 26/26-1/10539-2021 գրությամբ «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-LO-2021/176 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**